Հավելված_1
Հայաստանի Հանրապետության
Արարատի մարզի Արբաթ համայնքի
Ավագանու 15.12.2020թ Թիվ 31-Ն որոշման

ԱՐԲԱԹ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ

ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Սահմանել Արբաթ համայնքի 2021թվականի տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը `

1.1Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչականտարածքում նոր շենքերի, շինությունների եւ ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման)(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբսահմանվածշինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)թույլտվության համա
Հիմնական շենքերի եւ շինությունների համար՝
ա/ մինչեւ 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաեւ մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական եւ արտադրական նշանակության շենքերի եւ շինությունների համար՝7500 դրամ,
բ/Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի եւ շինությունների համար՝
բա. 200-իցմինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 15000դրամ,
բբ/ 500-իցմինչեւ 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 25000 դրամ,
բգ/1000- իցմինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 30000 դրամ,
բդ/ 3000-ից եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 50000 դրամ.
Ոչ հիմնական շենքերի եւ շինությունների համար՝
գ/ մինչեւ 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինություն ների համար՝ 1500դրամ,
դ/ 20 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի եւ շինությունների համար՝ 2500 դրամ.
1.2Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի եւ շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման եւ բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) հետեւանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ,
բ/բացի շենքերի եւ շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաեւ կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ

կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետեւանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, եւ, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաեւ նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը եւ դրույքաչափերը՝ շենքերի եւ շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զարարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդթվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որին կատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը եւ դրույքաչափերը.

1.3Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների եւ քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2500դրամ.

1.4Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100.000 դրամ.

1.5Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում եւ կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առեւտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման եւ նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝օրացուցային տարվա համար 30.000դրամ.

1.6 Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առքուվաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 25.000 դրամ.

1.7Համայնքի վարչական տարածքում ոգելից եւ ալկոհոլային խմիչքներիեւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվությանհամար՝

1/ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

բ/26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000դրամ,

գ/50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,

դ/ 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,

ե/200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ,

զ/500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ

2/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա/մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

բ/ 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

գ/50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ,
դ/ 100-ից մինչ եւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 դրամ,
ե/ 200-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 դրամ
զ/ 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 դրամ.
1.8Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում՝բացօթյա առեւտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար.
1.9 Համայնքի վարչական տարածքում առեւտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին եւ բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա/առեւտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ,
բ/հանրային սննդի եւ զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ,
գ/բաղնիքների (սաունաների) համար՝ 100000դրամ,
դ/ խաղատների համար՝ 250000 դրամ,
ե/. շահումով խաղերի համար՝ 150000 դրամ,
զ/վիճակախաղերի համար՝ 75000 դրամ.
1.10 Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման եւ իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա/ մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝2500դրամ,
բ/ 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,
գ/50-ից մինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝7500 դրամ,
ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա/ մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,
բ/ 26-ից մինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,
գ/50-ից մինչեւ 100 քառակուսիմետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ
դ/ 100-ից մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝3000 դրամ,

1.11 Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա/ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչեւ 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ,
բ/թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750 դրամ,
գ/սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

դ/այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ,
ե/դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝ 375դրամ,
զ/եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել եւ տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի՝ 75 դրամ
1.12Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում եւ այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50.000դրամ.
1.13 Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 5000դրամ.
1.14 Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման եւ (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 250.000դրամ.
2. Սույն որոշմամբ սահմանված դրույքաչափերին կիրառվել է 0,5 գործակիցը:

3.Հայաստանի Հանրապետության Արբաթ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետեւյալ տեսակները և դրույքաչափերը՝
ա/ Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետկապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու եւ հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000դրամ
բ/ Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի եւ շինությունների (այդթվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձեւակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահ մանել՝ 5000 դրամ
գ/ Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձեւակերպման համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ
դ/ Համայնքի տնօրինության եւ օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու եւ վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 3000 դրամ
ե/ Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների եւ աճուրդների մասնակցության համար՝համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 3000դրամ
3 Համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել՝
ա/ Առևտրի/ այդ թվում շուկաների/ հանրային սննդի և բնակչություն սպասարկման այլ ծառայություններ – 25 դրմ 1քմ:
բ/ Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ – 15 դրամ 1քմ:
գ/ Կրթական , մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ – 3 դրամ 1ք:

դ/ Փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչից 120 դրամ:
ե/վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ.
զ/ արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 / հինգ / ՀՀ դրամ.

4 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝500դրամ փոխհատուցման վճար :
5.Սահմանել համայնքի ենթակա կազմակերպություններում ծնողական վճարների հետևյալ դրույքաչափերը՝
ա/ Արբաթի երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ում յուրաքանչյուր երեխայի համար 4000 դրամ:
6. Համայնքի անասնաբույժի կողմից մատուցվոզ վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը՝
Կենդանիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերով խորհրդատվություն - 500դրամ,
Ծննդօգնություն ա/ թեթև միջամտություն -1000 դրամ,
բ/ ծանր միջամտություն - 5000դրամ,
Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում կախվածկենդանու տեսակից / բացառությամբ<<գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/ -100 դրամ /
մանր կենդանի, 200 դրամ / խոշոր կենդանի/,
Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար - 200 դրամ:
Ախտահանություն - 1 քմ. մետր 200դրամ,
Միջատազերծում - 1 քմ. մետր 100դրամ,
Կրծողների ոչնչացում - 1քմ. մետր 200դրամ,
Արհեստական Սերմնավորում - 5000դրամ,
Կենդանու հերձում - 1000դրամ /մանր կենդանի/
3000դրամ / մեծ կենդանի/,
Կենդանու բուժում յուրաքանչյուր այցելություն - 1000դրամ
Կենդանիների նախասպանդային զննում - 1000դրամ /
մանր կենդանի/,
2000դրամ / մեծ կենդանի,
Կենդանիների հետսպանդային զննում - 1000դրամ /մանր կենդանի,
2000 դրամ / խոշոր կենդանի/:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ